

# Մ Ե Մ Տ Օ Ն Ը

ԽՕՍՈՒԱԾ Պ. ԱԶԱՐՈՆԻ ԿՈՂՄԷ՝

ՄԻՋՔԼԻԹՈԱՅԻՆ ՏՅՆԱԿԱՆ ՄԵՄ

ՀԱՆՐԱՊԵՏԻՆ ՄԷՋ

Ազնի՛ւ հայեր,

Այսօր ամէնքս աօնական մեծ խր-  
րախճանութեան մը մէջ՝ եկած ենք  
անգամ մը ևս փառակոչել յիշատակը  
Ազգին վերանորգիչներուն որ, դա-  
րեր առաջ, իրենց հանճարն ու ստեղ-  
ծագործութիւնը ի սպաս դնելով Յե-  
ղին վերածնունդին՝ փրկեցին մեր գո-  
յութեան մրրկավար նաւը մեր պատ-  
ւութեան անձայրածիր ալէկոծութիւն-  
ներէն:

## Ազգին վիճակը

Հայ ազգը, այդ շրջանին սկիզբ-  
ները, կ'ապրէր բուռն և հեքոտ կեան-  
քով մը որ զինքը, յետ երկար ան-  
կումներու և կանգնումներու, այլեւս,  
կըստառէր, կը հիւժէր ջահի մը պէս  
որուն բոցը գեղեցկօրէն վառելէ վերջ՝  
կը շիջանի իր ծոցին մէջ:— Մերթ  
պարսիկ և, մերթ, յոյն անխնայ յար-  
ձակումները՝ մէկը, զինուած տիրա-  
պետելու անսանձ տենչով, միւսը իր  
քրիստոնէութեան և կեղծ բարեկա-  
մութեան քողերուն տակ ծածկած զմեզ  
չքացնելու, մեր ինքնուրոյնութիւնը,  
իսպառ սպաննելու մեղապարտ մո-  
լուցքը՝ ազգը հարուածած էին իր ա-



մէն մէկ ոսկրին վրայ, բացած էին անոր երակները սծիրին հազար բերաններուն: Միւս կողմէ մեր ներքին կեանքին մէջ, արքայական տպարանքներէն ներս՝ կ'աճէր փառութեան որդը հսկայ համեմատութիւններով, Տիրաններ, Արչակներ և Պապ թագաւորներ, խելակորոյս, ցոփակեաց և այլասերած, ապականած էին Մեծն Տիգրաններու հզօր գահը՝ և իրենց Արչակաւաններուն մէջ, արքեցած կրքի և հեշտանքի գինիներով, զարմանալի ինքնամոռացումով մը իրենց խնճոյքներուն մէջ կը տօնէին Ազգին հսկայական կործանումն ու անկանգնելի փլուզումը:— Նախանձայոյց և ազգադաւ նախարարութիւններ որ, բացի մէկ քանի անձնուէր և ազգասէր տուներէ, ամբողջ մեր պատմութեան ընթացքին վրայ անատօրէն խաղացած էին անմիաբանութեան, իրարակիրութեան և կտակուած ատելութեան մը ողբերգութիւնը՝ գացած և իրենց թագաւորները մատնած էին Յաղկերտներու դուռը՝ խնդացնելով սխերիմ պարսիկը և լացնելով ալեծաղիկ Մեծն Նիրօս Պարթևը:— Այսպէս Հայաստանի քաղաքական նաւը երկար տատանումներէ և խիզաուխմներէ վերջինկամ ջախջախուած էր անողոք ծովուն խարակներուն վրայ:

Գրեթու գիւտք

Եւ, ահա, այդ աղէտքի օրերուն էր որ, երբ, ազգը համատարած յուսահատութեան մը մէջ քարացած՝ ինքզինք յանձնած էր ճակատագրի հովերուն՝ յանկած հորիզոնին վերեւէն չողաց աստղը: Եւ այդ աստղը աւելի քաղցր էր քան թիթիկնիմինը՝ որուն լոյսը թէպէտ մեզ առաջնորդած էր քրիստոնէութեան աղբիւրները, սակայն չէր կրցած առաջնորդել մեզ մեր ծովերուն ու գիշերերուն մէջ, Ս. Մեսրոպի դէմքը ճառագայթեց նոր արևի մը պէս, Ս. Սահակ Պարթև, ամենէն հանճարեղ շառաւիղը իր ազնուական գերդաստանին, և եօթն անգամ գեղեցկացած իր ալեոյթին մէջ՝ ոսկեմուրճը զարկաւ գեղեցկութեան սփորին՝ և իմաստութեան ջուրը զովացուց ամէնքը: Վասն շապուհ թագաւորը ծիրանի հագած և մական ի ձեռին՝ ճանապարհ հորդեց իր ժողովուրդին որ զինքը կը սիրէր հօրմէ մը աւելի: Արդէն անոնք շատ ցուած և խոցուած էին ազգին սրտակեղծք վիճակէն, տեսած էին անցեալի ապականութիւնները որ Ազգը, տակաւ, խեղդելու վրայ էին, և, յետոյ, ինչ որ ամենէն աւելին էր, օտարամուտ և անհարապատ լեզուներ, իբրև գրականութեան գործիքներ, ողողած էին ազգային բոլոր հաստատութիւնները. քրիստոնէութիւնն իսկ որ կը սկսէր կարմրիլ իր գոհերու արիւնով՝ իր ազօթքն ու յոյսը կը մըմննջէր օտար լեզուներու մէջէն:— Ս. Մեսրոպ, իր հայկական հոգիին մէջ խորխորէն ընդվզած, զգաց թէ քաղաքական անկերպարան գոյութիւնը՝ իր ձեռին մէջ պիտի ձուլէր նաև, ազգին բարոյական գիմագիծը. և, ահա, Վաղարշապատի մէջ արքայական դահլիճները կը ջահողարգուին ու Վասն շապուհ արքային հովանաւորութեան տակ՝ կը գումարուի առաջին ժողովը խորհրդակցելու համար փրկութեան ելքիմը մտին: Չուշանար յաջողութիւնը Մեսրոպ իր մօտադը ուսին՝ մինչև Եգեօսիա և Անտիօք կ'երթայ, հազարաւոր արգելքներէ կ'անցնի, հազարաւոր փուշերու վրայ իր առաքեալի ոտքերը արիւն կը դրոշմեն, գիշերներ ու գիշերներ կը խոկայ, կ'աղօթէ և կ'արտասուէ, մինչև որ, կամքը յաղթանակած, կը ստեղծէ հայ գրիւրը, և իր ճգնաւորի խուցին մէջ կ'արտասանէ Ա. Բ. Գ. . . .

Ազգը փրկուած էր. հնչեց աւետիսը Հայաստանի մէկ ծայրէն միւսը, սկսաւ խրատնալութիւնը Ոսկեգարու ծնունդ երգել, առաջին հայ գիրքը բացուեցաւ և հայը կարգաց ու երգեց.

Բնդ եղեգան փող բոց ելանէր. . .

Ս. Սահակ Պարթև, կիրակի օր մը Վաղարշապատի մայր տաճարին բեմէն իր թարգմանած Աստուածաշունչը ձեռքին՝ մեծ և ծովածուալ բազմութեան մը առջև հայրապետական բամբ ձայնով կը կարգար.

Աղիցի լոյս, ևւ եղև լոյս. . .

Եւ, իբաւամբ, ցաթած էր արարչական լոյսը հայութեան վերև: Հայ գրականութիւնը, իբրև արտայատութիւնը ցեղին ոգիին, որ մինչև այն ատեն, լոկ բերնով խօսուեր էր, լոկ արտասաներ էին իր հեթանոսական տաղերուն մէջ և կամ գըրիւր էին օտար գրերով՝ կը յառնէր, նորափետուր և զատկակարմիր:— Եզնիկներ և կորիւններ մեծ վարդապետներուն տաղանդաւոր աշակերտները՝ գրարարը, ուսանիկ լեզուն, կը պանծացնէին մագաղաթին վրայ, կը յօրինէին մեր բարբառը բարձրագոյն ձևերու և զաղափարներու թռիչքով, կը քանդակէին մեր ոգին գարերու լանջքին վրայ:

Ու ինչ որ հայ թագաւորները չը կարողացան ընել, ինչ որ սուրը չկըրցաւ վճռել՝ գաղափարը հիմնաւորեց ամբապինդ խարխիսի մը վրայ:— Ս. Մեսրոպ ու Ս. Սահակ իրենց Տեսլականի պատարագին մէջ լոյսի Աստուծոյն ընծայեցին հայ ժողովուրդը՝ դողահար մըմնջելով.

Ջրոյոյ ի բոյոց Բեզ մատուցանեմ. . .

Այդ փրկիչներուն առջև է որ եկածէ խոնարհիլ, կամ, լաւ ևս, երկրպագել ամբողջ հայ ազգը:

Ներկան

Ու գրեթու գիւտէն հազար հինգ հարիւր տարի և տպագրութեան հայերու մէջ մուտքէն չ'ըս հարիւր տարի վերջ. ազգը կրած է բազմազան ու բազմաձև փոփոխութիւններ իր հոգեկան-բարոյական կեանքին մէջ:— Եղաւ որ Ոսկեգարը իր փողփողումէն վերջ, յանկարծ, նսեմանայ փոթորիկներու թուխպէն, եղաւ որ ազգը, ինչպէս առաջ, նոյնպէս և յետոյ, իր արիւնի գետերը տեսնէ իր աչքերով, ամբողջ դարեր կտաի մեր գրականութեան հզօր բազկերակը, չբարախէ, այլևս, բանաստեղծութիւնը հայ սըրտին մէջ, սակայն, այդ բոլորը չկասեցուցին սրարշաւ ընթացքը ազգին ապրելու տենչանքին, անոր յաւերժանալու բնազդին որուն գաղտնիքը մաքուր և պանծալի առհաւուրութեան մը մէջ կ'արմատանար:

Պիտի ապրէր հայութիւնը. հոգ չէ, իր կողերը թող վիրաւոր ըլլային, իր դէմքը թող արեակէզ այրած ըլլար, թող ցնցոտիներ հագած՝ ժամանակներուն վրայ թափառէր, հոգ չէր. ան արտասանած էր, մահուան դէմ առ դէմ, լ'է պիտի ապրէր, պիտի շնչէր լոյսը, պիտի երգէր իր հոգիին ու սրտին պայծառութիւններ և, վերջապէս, պիտի կոթողուէր ուրիշ մեծ ու փոքր ազգերու հասակներուն մէջ:— Գրականութիւն ունէր, ուրեմն, լոյս ունէր իր ընթանալիք ճանապարհներուն վրայ:— Եգիպտացիներ, Քաղդէացիները, փիւնիկեցիներ և Հռոմայեցիներ կորսուած կամ ձուլուած էին, հակառակ, իրենց գրականութեան և երգին, սակայն սա փոքր հայութիւնը դոր Խորինացիին «սառու մի փոքր» կը կոչէ՝ կը յամառէր փաթթուիլ իր ըլլալու հաւատքին սիւններուն:

Մենք, յաջորդներս, այդ մեծերուն որոնց, թերևս, չհասնի մեր մտածումն իսկ՝ մեր խոնարհումին և երկրպագութեան մէջ՝ պէտք է լաւ գիտնանք որ եթէ, գոնէ, մեզի չի պատկանիր սկսելու հոյակապ պատիւը, սակայն, մեզի կ'ընայ ո՛չ նուազ աւագ պարտականութիւնը, անվատ և անվհեր, շարունակել սկսուած հսկայ գործը՝ անոր մէջ բերելու համար մեր գարէն և մեր յոյսէն ճառագայթ մը:

Հեռուն մեր կարեվէր հայրենիքն



է որ, որ մը, ծնունդ տուաւ մտքի և ոյժի Տիտաններու, որ իր հանճարին թեկերով սաւառնեցաւ Բիւրաւորիոնէն, Աթէնք և Կեսարիայէն՝ Աղեքսանդրիա որ, ամենէն առաջ, կերտեց տաճարներ և պաշտեց լոյսը, այդ նուիրական հայրենիքն է որ, դէմքը սեռով քողած թողլքուած է Արտաշատի ճամբաներուն վրայ, մերթ, արհամարհուած օտարէն որ անոր այգիներէն կ'անցնի իր կողպուտով բեռնաւոր, և յաճախ, անարգուած՝ վատթար Բնամիտէն որ կը պղծէ անոր միտքը: Ո՞ւր են Անին լատակերտող հայերը, և ո՞ւր են Տաւրոսի բարձունքներուն վրայ ըմբոստութիւնը շիփորող քաջերը... — Չարատանջ և յոգնաբեկ ժողովուրդ մըն է հիմա, Այրարատէն մինչեւ Տարօն և վասպուրականէն մինչեւ Կիլիկիա, որուն չեն իսկ թոյլ տար նայելու իր երկնքի արեւին, չեն ձգեր խմելու իր աղբիւրներու ջուրէն, այլ մտրակուած կը վարեն ծովէ ծով և երկրէ երկիր, անխնայ, անկարեկիր և սպառնացոյց: Եւ այդ յոգնուրդը մինչեւ այսօր, սարսափահար կը թողու իր օճախը, ամուսնութեան մատանին կը փշրէ իր մատին վրայ՝ և, խելայեղած, կը նետուի օտար երկիրներու կեանքի կրկնային մէջ՝ անկասկած, ուշ կամ կանուխ, կուլ երթալու համար անոր յորձանքներուն մէջ:

Ի՞նչ կը խօսի մեզի Ս. Մեսրոպի և Ս. Սահակի յիշատակը, ի՞նչ կ'երգէ Ոսկեգարու փանդիւրը... — մեր հայերը գիտցան կատարել իրենց պարտականութիւնը առաջնորդելով Ազգը փրկութեան մեծ արշալոյսներուն տակ, ստեղծելով գրականութիւն մը որուն վրայ կը հակինք խորագմայլ աչքերով, և որ իր լուսաթաթաւ թեկերուն վրայ երկինք թոցուց մեր մատուցմը, բանաստեղծութիւնն ու երգը:

Եւ պէտք չէ լուծեամբ անցնինք այդ գրականութեան վրայէն, որ էութիւնն իսկ է Ոսկեգարու հզօր շարժումն՝ և որ մեր լեզուին մէջ զգեցու պայծառափայլ ծիրանի մը՝ արքայօ, էն վեհ և շքեղ:

Գրականութիւնը ազգի մը գոյութեան առանցքն է. ո՞չ մէկ ժողովուրդ պիտի չհասնէր բարձրութիւններու և յաղթական նուաճումներու, եթէ, չունենար իր գիրը և չփարէր անոր ճաճանչներուն՝ իր հոգիին բոլոր թեւերով: Ան է որ իր հազար ձեւերուն և երանգներուն մէջ կը յա երժացնէ ժողովուրդի մը յոյզերն ու երազները, անցած փառքերն ու վաղուան մարգարէութիւնները:

Մենք ալ ունինք մեր գրականութիւնը, — և հպարտ ենք ատոր համար, — որ կը բղխի Ոսկեգարու ակերէն իր մէջ հաւաքած մեր հեթանոսական երգին ու զգացումներուն, բոլոր փառքերուն և խրախոյսներուն ոսկեղէն առէջները՝ արձակուած հայ Հանճարին և Հոգիին խորերէն:

Մեր գրականութիւնը թէպէտ չունեցաւ տիեզերափայլ լոյս մը որ ընդգրկէր իր մէջ ուրիշ ազգերու և հոգիներու սահմանները, որ իր հաղորդութեան բերէր ուրիշ ժողովուրդներ, սակայն, ամենէն առաջ ստեղծուած մեզի համար, մեր ուրախութիւններուն և ցաւերուն համար՝ եղաւ այն արեւածաղիկը որ կը գառնայ ամէն լոյսի և արեւելքի, գեղեցկութեան և յառաջդիմութեան ամէն վերելքներուն:

Այսօր այդ գրականութիւնը անցած բիւրաւոր յոյզերէ և խռովքներէ՝ հին գրաւոր շրջաններուն գալարուած Աստուծոյ մը պատուանդանին առջեւ, միջին դարերուն արձագանգած սիրոյ և գինիի երգերով՝ զորս աշուղական քնարը կը միացնէր հեթանոսական փառատրութիւններուն, և, նորագոյն ժամանակներու մէջ, մերթ միաքիֆ, սակայն, ա՛լ աւելի մեր ցեղային հին և նոր Ոյժին և Յեղափոխութեան ոգեկոչումին նուիրուած՝ այդ գրականութիւնը ամբողջ մեր ցեղը կը պսակէ տիեզերական քաղաքակրթութեան հետ:

Հայրենիք և գրականութիւն, երկու անբաժանելի զօրութիւններ են որ զմեզ իրենց կը կապեն անխզելի կապերով, և որոնց կտակարարները իրենց փառքի ոլորտներէն, մեզ բուրս, աշխարհիս չորս ծագ երէն կը հրաւիրեն՝ այսօր այս մեծ տօնին մէջ՝ հազար անգամ աւելի սիրելի գանունք, ուխտել անոնց բարիքներուն վրայ որ մենք և գալիք բոլոր սերունդները, այսպէս հանդիսաւոր ընծայաբերութեամբ, անոնց փրկութեան և պայծառացման համար զոհաբերուինք:

Եւ, ի՞նչ աւելի արժանափառ ժառանգորդներ, մենք, քսաներորդ դարու հայերս, եթէ, այս մեծ տօնին խանդավառ սահմաններէն անդին, ամէն սուպարէզի և ամէն սատիճանի մէջ, ամէն երկնքի տակ և ամէն հողի վրայ՝ կարենայինք դողահար պատկառանքով և երջանկութեամբ արտասանել մեր Փրկիչներուն ծննդեան երգը:

Ա. Բ. Գ. . . .

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈՐԵԼԵԱՆԸ

### ԻՋՄԻՐԻ ՄԷՋ

Ինչպէս մեր անցեալ թիւով հրատարակած յայտարարութիւններէն կ'երևէր, թէ և ուշ, բայց մէկ-երկու օրուայ մէջ Իզմիրի հայութիւնն ալ կենդանութեան նշաններ սկսաւ ցոյց տալ համազգային այս մեծ օրուան առթիւ, որ տօնակատարութիւնն էր նաև հայ քաղաքակրթութեան տասնըհինգ դարեայ կենսունակութեան:

### ՄԻՋՔԼԻՒՊՅԱՅԻՆ ՀԱՆԳԵՍԸ

Շարաթ կէսօրէն ետք արդէն սգեւորութիւնը ծայր տուած էր Հայնոցին մէջ՝ շնորհիւ հայ Ակումբներուն, որոնք գրոշակներով և կանաչ տերեւներով զարդարուած էին, և իրենց գունները լայնօրէն բացած հասարակութեան առջեւ:

Նախապէս եղած համաձայնութեան մը վրայ, այդ գիշեր միջքլիւպային հանգէսը տեղի ունեցաւ «Քնար» հայ Երաժշտասիրաց Ակումբին մէջ: Հայ ժողովուրդի Տան, Երիտասարդաց Քրիստ, Միութեան, Հայ Որսորդաց Ակումբի և Ս. Դ. Հնչակեան Քլուպի անդամները իրենց հաստատութիւններուն մէջ համախմբուելով, ժամը 9/2 ին քացին «Քնար»-ի Ակումբը, ուր ժողովուրդը խուռներամ լեցուած էր, և որ Քնարի Ֆանֆառը կը նուագէր գեղեցիկ կտորներ:

Այս առաջին հանգէսը բացաւ նազարէթ էֆ. Ներսէսեան, հակիրճ կերպով բացատրելով օրուան մեծ նշանակութիւնը և հայ տառերու այնքան կատարելագործեալ հանգամանքը, որոնց շնորհիւ հայ երիտասարդութիւնը, ուրիշ ազգերէ աւելի զիւրութեամբ կրնայ իւրացնել օտար լեզուները: Նազարէթ էֆ. էն ետք Պ. Պարթև Արզուեան գեղեցկօրէն արտասանեց Եզրիէ Ալքեպ. Դուրեանի Ա. Բ. Գ. և Փրօֆ. Կ. Պէչկէօթիւչեան մանրամասն պատմական ըրաւ հայ տառերու գիւտին, իսկ Սերովբէ էֆ. Դաւիթեան բանախօսութիւնով մը վեր հանեց օրուայ տօնին նշանակութիւնը՝ հայ ազգի քաղաքակրթութեան աեսակէտով փոկրիկն թորոտեան սիրուն կերպով արտասանեց Գանիէլ վարուժանէն կըտոր մը, իսկ Պ. Ահարոն կարգաց յատկապէս նոյն մեծ հանգէսին համար պատրաստած գրական գեղեցիկ ճառ մը, զոր անբողջութեամբ հրատարակած ենք մեր այսօրուան թիւին մէջ: Խօսեցաւ նաև Ս. Դ. Հնչակեաներու կողմէ Պ. Զաւէն:

Բոլոր բանախօսութիւններն ու արտասանութիւնները մեծարուեցան ժողովուրդին կողմէ բուն ծափահարութիւններով, իսկ այս ամէնուն մէջ ընդ մէջ գեղեցիկ կտորներ նուագուեցան զաշնակի վրայ և «Քնար»-ի ֆանֆառի խումբին կողմէ: